

Խորհրդատվություն փոքր բիզնեսներին

Առավելագույնի՞ հասցնել
բիզնես հնարավորությունները
Իմացեք, թե ինչպես.

ԵՄ ֆինանսավորման միջոցով մենք օգնել ենք 365Wines հայաստանյան գինեգործական ընկերությանը ավելի արդյունավետ կերպով վարել իր բիզնեսը՝ և պատրաստ լինելով օգտվել առաջիկա նոր հնարավորություններից:



European Bank
for Reconstruction and Development

Գինեգործական ընկերություն, Հայաստան

Մենք սատարել ենք **365wines**-ին՝ զարգացող գինեգործական ընկերությանը բարելավել իր հաշվապահական ընթացակարգերը և ավելի արդյունավետ կերպով օգտագործել իր ռեսուրսները: ՏՀՏ ոլորտի խորհրդատուի օգնությամբ ձեռնարկությունը թվայնացրեց իր հաշվապահությունը, արդիականացրեց կառավարման իր գործիքները և խնայեց աշխատակիցների արժեքավոր ժամանակը՝ **37%**-ով բարձրացնելով իր բիզնեսի արդյունավետությունը:

365wines-ը մրգային գինիների մեծ տեսակների է արտադրում և վաճառում: Ընկերությունը կայուն աճ է գրանցել, և այժմ արտադրանքի արտահանումները դեպի ԵՄ, Ռուսաստան և նույնիսկ հեռավոր ԱՄՆ և Ավստրալիա կազմում են գործառնությունների 70 տոկոսը:

Գործունեությունն ըստ ՀՀ օրենսդրության ծավալելու նպատակով **365wines** ընկերությունը պետք է կարողանար ճշգրիտ և հաճախակի թարմացվող հաշվապահական հաշվետվություններ տրամադրել: Ձեռնարկության աճը նշանակում էր, որ ձեռքով տարվող հաշվապահությունն այլևս ցանկալի տարբերակ չէր, քանզի այն ժամանակատար էր և կարող էր հանգեցնել հաշվետվությունների անհամապատասխանության: Մինևույն ժամանակ, ճշգրիտ թվերը և վիճակագրությունը կօգնեին ընկերությանը հասկանալ, թե որքանով արդյունավետ են իրականացվում իր գործառնությունները:



Կառավարման նոր տեղեկատվական համակարգն օգնեց **365wines** ընկերությանը ավելի լավ տեղաբաշխել իր

բիզնեսի կարիքների հանգամանակից վերլուծությունից հետո մենք ընկերությանը կապեցինք տեղական ՏՀՏ խորհրդատուի հետ, որպեսզի խորհրդատուն հենց այդ ընկերության կարիքներին միտված լուծումներ տրամադրեր: Այդ լուծումները հնարավորություն կտային՝

- Ավտոմատացնել պատվերների ձևակերպման, տարածման և շրջանառման ընթացակարգերը,
- Ստանալ ճշգրիտ տեղեկատվություն ընկերության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ՝ աջակցելով բիզնեսի կառավարմանն առնչվող որոշումների կայացմանը,
- Ստեղծել հատուկ գործիքներ՝ տեղեկատվության հասանելիությունը կառավարելու և տեղեկատվական անվտանգությունը երաշխավորելու համար,
- Մատուցել տեխնիկական սպասարկման ծառայություններ ծրագրի ավարտից հետո ևս երեք ամիս:

Նոր համակարգի օգնությամբ **365wines** ընկերությունը սկսեց ներկայացնել պատշաճ հարկային և ֆինանսական հաշվետվություններ: Ավելին, ընկերությունը կարող էր համակարգը կիրառել իր գույքացանկն ավելի մեծ արդյունավետությամբ կառավարելու, պատվերներն էլեկտրոնային եղանակով հավաքագրելու, ինչպես նաև կադրերի կառավարմանը, վճարումների կատարմանը և աշխատաժամանակի հաշվարկին առնչվող տարբեր խնդիրները լուծելու համար:

ՎՋԵԲ-ի ծրագրի մասնագետ Վարդուհի Զիլինգարյանն այս ծրագրի համար արժանացել է «Լավագույն աշխատակարգ» մրցանակին՝ 2014թ.-ի Խորհրդատվական ծառայությունների գերազանցության Գաբրիել ալ Մավեմ մրցանակաբաշխության ժամանակ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս www.ga-foundation.org:

www.ebrd.com/knowhow

Ապրանքաշրջանառություն
+15%

Արտադրողականություն
+37%

Թղթաբանության նվազում
+50%

Ծրագրի ընդհանուր արժեքը
€4,926

Հաճախորդի ներդրումը
€1,478

CS&E-ARM-arm14

